

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2016 թ. մայիսի 26-ի թիվ 7 նիստում
ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Ա. Հ. Սիմոնյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
(2016-2021թթ.)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Երևանի պետական համալսարանում (այսուհետ՝ ԵՊՀ) պրոֆեսորադասախոսական կազմի՝ 2011 թվականից կրեդիտային համակարգով իրականացվող որակավորման բարձրացումը (այսուհետ՝ ՈԲ) շարունակական բազմափուլ գործընթաց է: Ծրագրի առաջին փուլը (2011-2016թթ.) միտված էր որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան ԵՊՀ դասախոսական կազմի համալրմանը և բարելավմանը: Երկրորդ փուլում (2016-2021թթ.) ծրագրի կառուցվածքի և բովանդակության կատարելագործումը պայմանավորված է ԵՊՀ 2016 – 2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:
- 1.2. *«Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» սույն մեթոդական փաստաթուղթը սահմանում է ներկա ծրագրի (2016-2021թթ.) կառուցվածքը, բովանդակությունը, կրթական և հետազոտական-ուսումնամեթոդական մոդուլների ու դասընթացների կազմը, դրանց՝ ECTS կրեդիտներով արտահայտված աշխատածավալները և ծրագրի ավարտական պահանջները:*

2. ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

- 2.1. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ ծրագիրը բաղկացած է երկու հիմնական կառուցամասից՝ կրթական և հետազոտական-ուսումնամեթոդական՝ պարտադիր և կամրնտրական բաղադրիչներով: Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են հնգամյա ժամկետում (2016-2021թթ.)՝ համաձայն ունկնդրի ՈԲ անհատական ծրագրի և պահպանելով սույն փաստաթղթում սահմանված ավարտական պահանջները (աղ.1):
- 2.2. Կրեդիտային համակարգը դասախոսին հնարավորություն է տալիս որակավորումը բարձրացնելու ուսուցման անհատական ծրագրով՝ կրթական և հետազոտական-ուսումնամեթոդական մոդուլների հարաբերակցության ընտրությամբ ապահովելով իր համար նախընտրելի հմտությունների զարգացումը:
- 2.3. Ծրագրի ընդհանուր աշխատածավալը 30 կրեդիտ է, որից 2–25-ը կազմում է կրթական բեռնվածությունը, 5–28-ը՝ հետազոտական-ուսումնամեթոդական:
- 2.4. **Կրթական կառուցամասի** համար սահմանվում է տարբերակված պարտադիր բեռնվածություն՝ 2, 5, 7: Ծրագրի բոլոր մասնակիցների համար պարտադիր է ընդամենը մեկ դասընթաց (2 կրեդիտ) մասնագիտական պատրաստությունից: Անգլերենից 3 կրեդիտ ստանալը պարտադիր է միայն այն դասախոսների համար, ովքեր դեռևս չունեն իմացության պահանջվող բարձրագույն մակարդակը (մասնագետները՝ C2, ոչ մասնագետները՝ C1): Սկսնակ (մինչև 5 տարվա ստաժ ունեցող) դասախոսների համար պարտադիր է ևս մեկ դասընթաց (2 կրեդիտ) մանկավարժական պատրաստությունից: Ըստ այդմ կրթական կառուցամասից դասախոսը

**Աղյուսակ 1. Պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ կրթագիտական ծրագրի
ընդհանուր կառուցվածքը
(պարտադիր բեռնվածության մասով)**

Հ/հ	Ծրագրի բաղադրիչի անվանումը	Ունկնդրի կրեդիտային պարտադիր բեռնվածությունը	
		բոլորի համար	տարբերակված
Ա	ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	2	7
1.	Ընդհանուր պատրաստություն	-	3
1.1.	Անգլերենը ակադեմիական միջավայրում	-	3
1.2.	Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ	-	-
2.	Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն	-	2
2.1.	Դասավանդման, ուսումնառության և գնահատման հիմունքներ	-	2
3.	Մասնագիտական պատրաստություն	2	2
3.1.	Մասնագիտության արդի հիմնախնդիրները	2	2
4.	Ընդհանուր կամընտրական դասընթացներ	-	-
5.	Որակավորման բարձրացման այլ ձևեր	-	-
Բ	ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ-ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	5	5
	5 տարում ունկնդրի վաստակած կրեդիտների ընդհանուր քանակը՝	7	12
	30		

պետք է հավաքի 2, 5 կամ 7 կրեդիտ՝ որպես պարտադիր բեռնվածություն: Կրթական լրացուցիչ կրեդիտներ ունկնդիրը կարող է ձեռք բերել ինչպես տարբեր կրթամասերից նախատեսվող, այնպես էլ ընդհանուր կամընտրական դասընթացներից:

2.5. **Հետազոտական-ուսումնամեթոդական կառուցամասի** համար սահմանվում է 5 կրեդիտ պարտադիր բեռնվածություն (բաղադրիչ(ներ)ը՝ դասախոսի ընտրությամբ):

2.6. Այսպիսով՝ ծրագրի ընդհանուր պարտադիր բեռնվածությունը կազմում է 7 (2+5), 10 (2+3+5) կամ 12 (2+3+2+5) կրեդիտ, որին դասախոսը, իր ընտրությամբ, ավելացնում է ևս 23-ը, 20-ը կամ 18-ը՝ լրացնելով պահանջվող աշխատածավալը¹:

3. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պրոֆեսորադասախոսական կազմի ՈԲ կրթագիտական ծրագրի կրթական ու հետազոտական-ուսումնամեթոդական կառուցամասերի բովանդակությունը, մոդուլ-

¹ Ունկնդիրը լրացուցիչ կրեդիտներ կարող է հավաքել ինչպես կրթական, այնպես էլ հետազոտական-ուսումնամեթոդական կառուցամասից, կամ երկուսից էլ՝ տարբեր հարաբերակցությամբ:

ների կրեդիտատարությունը՝ ունկնդրի պարտադիր բեռնվածությամբ, և գնահատման ձևերը տրված են *հավելվածում*:

3.1. Կրթական կառուցամաս

Ծրագրի կրթական կառուցամասի բեռնվածությունը 25 կրեդիտ է: Այն ներառում է հետևյալ 5 կրթամասերը՝ **ընդհանուր, մանկավարժական-հոգեբանական ու մասնագիտական պատրաստություն, ընդհանուր կամընտրական դասընթացներ և ՈԲ այլ ձևեր**:

Կրթամասերն ունեն 2-ական բաղադրիչ՝ պարտադիր և կամընտրական: Ծրագրում տրվում են պարտադիր բաղադրիչները, իսկ կամընտրական դասընթացները, որոնց աշխատածավալները սահմանափակված չեն, ունկնդրին ներկայացվում են յուրաքանչյուր ուսումնական կիսամյակ՝ ընտրության հնարավորություն տալով դասախոսին: Կամընտրական դասընթացների ցանկը պարբերաբար նորացվում է՝ հաշվի առնելով համալսարանի, ֆակուլտետների և դասախոսների լրացուցիչ պահանջները:

3.1.1. «Ընդհանուր պատրաստություն» կրթամասն ունի 2 բաղադրիչ՝ *անգլերենը ակադեմիական միջավայրում, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (այսուհետ՝ S2S)*:

«*Անգլերենը ակադեմիական միջավայրում*» բաղադրիչը միտված է անգլերենի իմացության մակարդակի բարձրացմանը՝ ապահովելու դասախոսի՝ ակադեմիական միջավայրում օտար լեզվով հաղորդակցության բարելավումը: ԵՊՀ-ում ներդրված է անգլերենի միջազգային հավաստագրում (**iTEP, International Test of English Proficiency**)՝ 6 մոդուլով՝ յուրաքանչյուրը 3 կրեդիտ աշխատածավալով:

Ներկա ծրագրում անգլերենից 3 կրեդիտ բեռնվածությունը պարտադիր է՝

ա) ծրագիրը շարունակող այն մասնագետների համար, որոնք դեռևս չունեն լեզվիմացության 6-րդ (բարձրագույն)՝ C2 մակարդակ,

բ) ծրագրում նոր ընդգրկված այն մասնագետների համար, որոնք չունեն լեզվիմացության շեմային նվազագույն՝ 5-րդ (C1) մակարդակ,

գ) այն ոչ մասնագետների համար, որոնք դեռևս չունեն լեզվիմացության պահանջվող առավելագույն՝ 5-րդ (C1) մակարդակ:

Ծրագրի նախորդ փուլում անգլերենի իմացության 6-րդ՝ C2 մակարդակ ձեռք բերած մասնագետները և առնվազն 5-րդ՝ C1 մակարդակ ունեցող ոչ մասնագետներն ազատվում են անգլերենի նոր քննություն հանձնելուց²: Մակայն նրանք կարող են լրացուցիչ կրեդիտներ ստանալ միջազգային այլ ծրագրով անգլերենի իրենց իմացությունը վերահաստատելու կամ բարելավելու դեպքում:

Ընդհանուր պատրաստության երկրորդ՝ S2S բաղադրիչը չի նախատեսում պարտադիր մոդուլ, սակայն ներկայացնում է մի շարք դասընթացներ, որոնց կամընտրաբար կարող է մասնակցել դասախոսը՝ մասնագիտական և անձնային պահանջներին համապատասխան: Բաղադրիչը նպատակաուղղված է կրթական

² Նրանց համար պարտադիր է մնում 30 կրեդիտ հավաքելը:

գործընթացում ՏՀՏ-ի ընդլայնված և արդյունավետ օգտագործման հմտությունների ձեռքբերմանը:

3.1.2. «Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն» կրթամասում ընդգրկված է 1 պարտադիր դասընթաց («Դասավանդման, ուսումնառության և գնահատման հիմունքներ»՝ 2 կրեդիտ բեռնվածությամբ), որը նախատեսված է սկսնակ (մինչև 5 տարվա ստաժ ունեցող) դասախոսների համար:

Կրթամասը ներառում է մանկավարժական և հոգեբանական կամընտրական դասընթացներ³, որոնք նպատակաուղղված են ունկնդրի՝ դասավանդման, ուսումնառության, գնահատման հիմունքների ու մեթոդների իմացության բարելավմանը և մանկավարժական ու հոգեբանական հմտությունների զարգացմանը:

3.1.3. «Մասնագիտական պատրաստությունը» միակ կրթամասն է, որը նախատեսում է 1 պարտադիր դասընթաց ծրագրի բոլոր մասնակիցների համար («Մասնագիտության արդի հիմնախնդիրները»՝ 2 կրեդիտ բեռնվածությամբ: Ֆակուլտետները պետք է մշակեն դասընթացի այնպիսի մոդուլային ծրագիր, որը ներառի տվյալ մասնագիտության բոլոր բաղադրատարրերը՝ իրենց հիմնախնդիրներով, արդիական տեսանկյունով: Բնականաբար դասընթացը պետք է վարեն համապատասխան դասախոսներ՝ ըստ մոդուլների: Կրթամասը միտված է ունկնդրի մասնագիտական գիտելիքների արդիականացմանը:

3.1.4. «Ընդհանուր կամընտրական դասընթացներ» կրթամասը ներառում է ՈԲ ծրագրով կազմակերպվող կամընտրական այն դասընթացները, որոնք դուրս են նախորդ կրթամասերի բովանդակությունից: Կրթական այս բաղադրիչում կարող են ընդգրկվել նաև այլ օտար լեզուների դասընթացներ (ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, հունարեն, լատիներեն և այլն): Կրթամասը միտված է հարստացնելու դասախոսի գիտելիքները՝ ըստ նախասիրությունների:

3.1.5. «ՈԲ այլ ձևեր» կրթամասի նպատակն է հաշվառել և կրեդիտավորել հիմնական ծրագրից դուրս ունկնդրի դրսևորած ակտիվությունը՝ խթանելու նրա ակադեմիական շարժունությունը: Կրթամասի բաղադրիչները և դրանց կրեդիտատարությունը չեն սահմանափակվում:

3.2. Հետազոտական-ուսումնամեթոդական կառուցամաս

Ծրագրի հետազոտական-ուսումնամեթոդական կառուցամասի համար սահմանվում է 5 կրեդիտ պարտադիր բեռնվածություն: Կառուցամասը ներառում է հետևյալ 3 բաղադրիչները՝ **հրատարակումներ, ատենախոսության պաշտպանություն և հեղինակային իրավունքի արտոնագիր:**

3.2.1. Հրատարակումներ⁴ են՝ գիտական հոդված, զեկուցում (զեկուցման թեզիս) միջազգային համաժողովում, մենագրություն, դասագիրք, ուսումնական (ուսումնամեթոդական) ձեռնարկ և մեթոդական ցուցումներ (հանձնարարականներ, ուղեցույցներ և այլն):

Գիտական հոդվածի համար ունկնդիրը ստանում է՝

³ Տարբերակված նաև սկսնակ դասախոսների համար:

⁴ Հաշվարկվում են նաև էլեկտրոնային հրատարակությունները

ա) 8 կրեդիտ, եթե այն հրապարակվել է ազդեցության գործակցով ամսագրում (համահեղինակության դեպքում՝ 4 կրեդիտ),

բ) 6 կրեդիտ, եթե այն հրապարակվել է «Web of Science», «Scopus» և նման այլ շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում (համահեղինակությամբ՝ 3 կրեդիտ),

գ) 3 կրեդիտ, եթե այն տպագրվել է ՀՀ ԲՈՀ-ի ցուցակում ներառված պարբերական գիտական հրատարակություններում (համահեղինակությամբ՝ 2 կրեդիտ),

դ) 1 կրեդիտ, եթե այն տպագրվել է գիտական այլ հրատարակություններում:

3.2.2. Միջազգային համաժողովում ունեցած **զեկուցման (զեկուցման թեզիսի)** համար ունկնդիրը ստանում է 1 կրեդիտ:

3.2.3. **Մենագրությունը** և **դասագիրքը**⁵ գնահատվում են 10-ական կրեդիտ (համահեղինակությամբ՝ 5): **Ուսումնական (ուսումնամեթոդական) ձեռնարկի**⁶ համար հատկացվում է 5 (համահեղինակությամբ՝ 3) և **մեթոդական ցուցումների (հանձնարարականներ, ուղեցույցներ և այլն)** համար՝ 1 կրեդիտ:

3.2.4. **Դոկտորական և թեկնածուական ատենախոսության** պաշտպանության համար հատկացվում են համապատասխանաբար 10 և 6 կրեդիտ:

3.2.5. **Հեղինակային իրավունքի արտոնագրի** համար սահմանվում է 6 կրեդիտ:

4. ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

4.1. ՈԲ-ն հավաստելու համար ունկնդիրը հնգամյա շրջափուլում պետք է կուտակի առնվազն 30 կրեդիտ, որը ներառում է ծրագրի ինչպես կրթական, այնպես էլ հետազոտական-ուսումնամեթոդական կառուցամասերը:

4.2. Դասախոսի ՈԲ անհատական ծրագրի **կրթական կառուցամասի** առավելագույն բեռնվածությունը կարող է կազմել 25 կրեդիտ, իսկ նվազագույնը՝ 2: Ընդ որում, կրթական պարտադիր բեռնվածությունը 2–7 կրեդիտ է՝ տարբերակված ըստ ունկնդիրների:

4.3. Ծրագրի **հետազոտական-ուսումնամեթոդական կառուցամասի** համար սահմանվում է ոչ թե պարտադիր բաղադրիչ, այլ պարտադիր բեռնվածություն՝ 5 կրեդիտ: Կառուցամասի առավելագույն բեռնվածությունը կարող է կազմել 28 կրեդիտ:

4.4. Ամփոփիչ ատեստավորման հիմնական չափանիշ է ՈԲ-ի համար սահմանված հետևյալ պահանջների կատարումը, համաձայն որի՝ ՈԲ անցած են համարվում ծրագրի այն մասնակիցները, որոնք՝

- Բարձրացրել են անգլերենի իմացության իրենց մակարդակը՝ ձեռք բերելով ակադեմիական միջավայրում օտար լեզվով հաղորդակցվելու բավարար հմտություն,
- Տիրապետում են ՏՀՏ-ի՝ կրթական գործընթացում ապահովելով դրանց ընդլայնված և արդյունավետ օգտագործումը,

⁵ Ե՛վ բուհական, և՛ դպրոցական

⁶ Այդ թվում՝ ուսուցչի մեթոդական ձեռնարկ

- Ձեռք են բերել մանկավարժական-հոգեբանական անհրաժեշտ գիտելիքներ՝ բարելավելով դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները,
- Քաջատեղյակ են կրթագիտական տվյալ բնագավառի զարգացման գերակա ուղղություններին և հիմնախնդիրներին,
- Հեղինակել են առնվազն 5 կրեդիտին համարժեք հետազոտական-ուսումնամեթոդական հրատարակումներ,
- Ձեռք բերած գիտելիքները և հմտությունները, ինչպես նաև գիտական արդյունքները կիրառում են կրթական գործընթացում:

**ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի
ՈԲ ծրագրի կառուցվածքը (2016-2021թթ.)**

Կրթական և հետազոտական-ուսումնամեթոդական մոդուլները	Միավոր մոդուլի համար սահմանված կրեդիտը	Ունկնորի կրեդիտային պարտադիր բեռնվածությունը ¹	Գնահատման ձևը
Ա. ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		2 (7)	
1. Ընդհանուր պատրաստություն		2 (5)	
<i>1.1. Անգլերենը ակադեմիական միջավայրում</i>	3	3 ²	քննություն
<i>1.2. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (ՏՀՏ)</i>			
• Կամընտրական դասընթացներ ³	Ըստ աշխատածավալի		ստուգարք
2. Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն			
• Դասավանդման, ուսումնառության և գնահատման հիմունքներ	2	2 ⁴	ստուգարք
• Կամընտրական դասընթացներ ³	Ըստ աշխատածավալի		ստուգարք
3. Մասնագիտական պատրաստություն			
• Մասնագիտության արդի հիմնախնդիրները	2	2	ստուգարք
• Կամընտրական դասընթացներ ³	Ըստ աշխատածավալի		ստուգարք
4. Ընդհանուր կամընտրական դասընթացներ³	Ըստ աշխատածավալի		ստուգարք
5. Որակավորման բարձրացման այլ ձևեր (վերապատրաստում, ստաժավորում, ամառային դպրոց և այլն)	Ըստ աշխատածավալի		մասնակցության հավաստում/ տեղեկանք
Բ. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ-ՈՒՍՈՒՄԱՍԵԹՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ⁵		5	ըստ դասախոսի տարեկան հաշվետվության
1. Գիտական հոդված			
• ազդեցության գործակցով ամսագրերում	8 (4)		
• «Web of Science», «Scopus» և այլ շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում	6 (3)		
• ՀՀ ԲՈՂ-ի ցուցակում ներառված պարբերական գիտական հրատարակություններում	3 (2)		
• գիտական այլ հրատարակություններում	1		
2. Զեկուցում (թեզիս) միջազգային համաժողովում	1		
3. Մենագրություն	10 (5)		
4. Դասագիրք	10 (5)		
5. Ուսումնական (ուսումնամեթոդական) ձեռնարկ	5 (3)		
6. Մեթոդական ցուցումներ (հանձնարարականներ, ուղեցույցներ և այլն)	1		
7. Ատենախոսության պաշտպանություն			
• դոկտորական	10		
• թեկնածուական	6		
8. Հեղինակային իրավունքի արտոնագիր	6		
5 տարում ունկնորի վաստակած կրեդիտների ընդհանուր քանակը՝ 30		7 (12)	

¹ Ծրագրում նոր ընդգրկված դասախոսների համար գործում են 1-ին փուլի պահանջները կրթական պարտադիր բաղադրիչների մասով:

² Ծրագիրը շարունակող մասնագետների համար, ովքեր չունեն C2 մակարդակ, և ոչ մասնագետների համար, ովքեր չունեն C1 մակարդակ:

³ Դասախոսի ընտրությամբ՝ ըստ կրթամասային և ընդհանուր կամընտրական դասընթացների ցանկի:

⁴ Մկսնակ՝ մինչև 5 տարվա ստաժ ունեցող դասախոսների համար:

⁵ Փակագծերում նշված են համահեղինակության դեպքում յուրաքանչյուրին տրվող կրեդիտները: